ԾՐԱԳԻՐ

«Երկրապահ Կամավորականների Միություն» ՀԿ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 10 ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2023թ.

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Երկրապահ Կամավորականների Միություն» ՀԿ

Կազմակերպությունը ստեղծվել է (վերանվանվել է) 1993թ. հունիսի 23-24-ին ԵԿՄ առաջին համագումարի որոշմամբ, գործում է ՀՀ Սահմանադրության, գործող օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և ԵԿՄ կանոնադրության հիման վրա:

Կազմակերպության պետական գրանցման վկայականի համարն է՝ 03Ա054927

1.1 Կազմակերպության նպատակներն ու խնդիրները

,Երկրապահ Կամավորականների Միությունե ՀԿ կազմակերպության նպատակներն են (ըստ կազմակերպության կանոնադրության)

1.,,Երկրապահ Կամավորականների Միություն,, հասարակական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների և Արցախի ազատագրման մասնակիցների շահերի ընդհանրության հիման վրա ստեղծված կամավոր հասարակական միավոր է, որը գործում է ՀՀ ողջ տարածքում:

2.ԵԿՄ-ն, որպես հայրենիքի հզորացման և ժողովրդի անվտանգության ապահովման գործին նվիրված եռասերունդ՝ ավագ սերնդի, երիտասարդ և պատանի երկրապահների կառույց, իր ողջ ներուժը ներդնում է նպաստելու ՀՀ և ԱՀ սահմանների պաշտպանությանը, հաշմանդամ, զոհված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը, նրանց նյութական ու բարոյական օգնության ցուցաբերմանը, աջակցում է նրանց քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

3.ԵԿՄ-ն լինելով կամավորական կազմակերպություն, ՀՀ ՊՆ, պետական և ոչ պետական կառույցների հետ համագործակցությամբ, իր նպաստն է բերում

օժանդակելու ՀՀ զինված ուժերի հզորացման, երիտասարդների և պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

1.2 Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

,Երկրապահ Կամավորականների Միություն ՀԿ կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենքով,հասարակական կազմակերպության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, ,Երկրապահ Կամավորականների Միություն ՀԿ կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

,Երկրապահ Կամավորականների Միություն ՀԿ կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են

1.Սասուն Մեխակի Միքայելյան – ԵԿՄ վարչության նախագահ
2.Գառնիկ Սերյոժայի Միքայելյան- ԵԿՄ վարչության փոխնախագահ
3.Աշոտ Արտավազդի Խաչատրյան- ԵԿՄ Արմավիրի մարզի նախագահ
4.Պատվական Արտաշի Ջեյրանյան - ԵԿՄ Արմավիրի տ/բ նախագահ
5.Նարեկ Լևոնի Գասպարյան – ԵԿՄ Ուսումնամարզական համալիրի պետ

ԵԿՄ գործում է ՀՀ ողջ տարածքում, իր կազմում ունի մոտ 15.153 ԵԿՄ անդամներ, որոնք հաշվառված են Երևանի և 10 մարզային խորհուրդներում ընդգրկված 65 տարածքային ստորաբաժանումներում, այդ թվում նաև Արմավիրի տարածքային բաժանմունքում, ,,Երիտասարդ երկրապահ,, և ,,Պատանի երկրապահ,, ակումբներում:

1.4 Կազմակերպության գործունեության ոլորտը

,Երկրապահ Կամավորականների Միություն ՀԿ կազմակերպության գործունեության ոլորտներն են

- Հայրենիքի սահմանների պաշտպանություն և հզորացում
- Հայ ժողովրդի անվտանգության ապահովում
- Պատանիների և երիտասարդների ռազմահայրենասիրության դաստիարակություն
- ՀՀ և ԱՀ սահմանների պաշտպանություն

2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1 Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել
-Հայաստանի Հանրապետության Երկրապահ Կամավորականների Միության Հասարակական Կազմակերպության կանոնադրությունը

-ՀՀ սահմանների պաշտպանությունը, հաշմանդամ, զոհված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը, նրանց նյութական ու բարոյական օգնության ցուցաբերումը, նրանց քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության աջակցումը:

2.2 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներն են հանդիսանում բարերարների նվիրաբերությունները

2.3 Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսված է իրականացնել 10 տարվա ընթացքում

2.4 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի ,Երկրապահ Կամավորականների Միությունե ՀԿ կազմակերպությունը նախատեսում է իրականացնել 50-ից ավելի միջոցառումներ այդ թվում՝

-Նպաստել մարզի ավելի քան 3000 ազատամարտիկների, հաշմանդամ, զոհված, անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը , ցույց տալ նյութական և բարոյական աջակցություն, աջակցել նրանց քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը
-Նախաձեռնել 20-ից ավելի միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության ընթացքում զոհված, անհայտ կորած մարտիկների հիշատակին, ինչպես նաև հերոսական մարտական ուղի անցած երկրապահների մեծարմանը
-Աջակցել Հայրենիքի հզորացման և հայ ժողովրդի անվտանգության ապահովման գործին
-Օժանդակել ՀՀ Զինված ուժերի հզորացմանն ու պատանիների և երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը

-Մարզային խորհրդում և 4 տարածքային ստորաբաժանումներում յուրաքանչյուր տարի կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված Երկրապահ Կամավորականների Միության հավերժ նախագահ՝ սպարապետ Վազգեն Սարգսյանի հիշատակին

-Կազմակերպությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում իր անդամների պարբերաբար հանդիպումների և տեղեկատվության փոխանակման համար

-ԵԿՄ անդամների անվճար իրավաբանական ծառայության մատուցում:

-Երիտասարդ և պատանի երկրապահների հետ ողջ տարվա ընթացքում պարբերաբար իրականացվում են պարապմունքներ, իսկ ամռան ամիսներին Գեղարքունիքի մարզում գտնվող ,,Եռասերունդ երկրապահ,, ուսումնամարզական ճամբարում իրականացվում են հավաքներ, որոնց մասնակցում են 3500-4000 պատանիներ ու աղջիկներ ՀՀ-ից Արցախից և սփյուռքից:

2.5 Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ԵԿՄ-ը իրականացնելու է երկրապահի հիմնական նպատակներն ու առաքելությունը: Դրանք իրականացնելու համար անհրաժեշտ է Արմավիրում նույնպես ունենալ տարածք, որտեղ կհավաքվեն բաժանմունքի անդամները, կքննարկեն, կհավաքագրեն և կարխիվացնեն անհրաժեշտ նյութերը: Բաժանմունքի տրամադրումից ակնկալում ենք, որ այստեղ ևս երկրապահ կամավորականների միությունը կծավալի լայնամաշտաբ գործունեությունը և կնպաստի մեր հայրենիքի սահմանների ամրապնդման աշխատանքներին: Բաժանմունքի անդամների հավաքատեղի ունենալը կնպաստի երիտասարդ և պատանի երկրապահների համալրմանը: ԵԿՄ ,,Պատանի երկրապահ,, ակումբը կսկսի իր գործունեությունը նորովի, երեխաները, որոնք մեծ ոգևորությամբ այսօր համալրում են մեր շարքերը ավելի վստահությամբ կմոտենան այս հարցին: Պատանի երկրապահ ակումբի սաների հետ անցկացվող ռազմա-հայրենասիրական պարապմունքների արդյունքում նրանք կդառնան ՀՀ բանակի պատրաստի զինվոր:

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ,,Երկրապահ Կամավորականների Միություն,, հասարակական կազմակերպությունը կապահովի իր առաջ դրված նպատակներն ու խնդիրները:

ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ